

5 Օգոստոսի

Ազգային հաստատություններուն մէկէն պաշտօնեայ մը կճանբուի:

–Ինչո՞ւ ճանբեցին զքեզ, Բարեկա՛մ, կը հարցունէր ծանօթներէն մին:

–Ես ալ չգիտեմ:

–Իմացայ որ գողութիւն մը ըրած ես պաշտօնիդ մէջ:

–Զրպարտութիւն է:

–Կ'ըսեն թէ ճշմարտութիւն է:

–Թո՛ղ ըսեն թէ ի՛նչ գողցած եմ: Եղբա՛յր, ամեն օր խղճիս սա հարցումը կ'ընեմ. «Բան մը գողցա՞յ», եւ խիղճս ալ սա պատասխանը կու տայ. «Տէր ողորմեա, դուն անանկ մա՞րդ ես. դուն գողութիւն ընելու համար ստեղծուած չես. դուն բան մ'ալ գողցած չես»:

–Թերեւս խիղճդ կ'ամչնայ եւ երեսը չբռներ ճշմարիտն քեզ ըսելու:

–Չէ, իմ խիղճս ամչնալ չունի, ճշմարտութիւնն համարձակ կը խոստովանի:

–Ստո՞յգ է ըսածդ:

–Այո՛, որու որ կ'ուզես հարցուր, թէ այս ինչ մարդուն խիղճը ճշմարտախօ՞ւ է. ամենքն ալ պիտի պատասխանեն, թէ պատուաւոր եւ ճշմարտախօս խիղճ մ'է:

–Եթէ այդպէս է՝ խղճէդ գաղտնի ըրած ես այդ գողութիւնը:

**

–Ժը մանժ, թիւ մանժ, իլ մանժ, նու մանժօն, վու մանժէ, իլ մանժ...

–Այդ ի՞նչ է, Կարապետ աղա. քառասունէն ետքը նոր բանե՞ր կ'հանես:

–Ի՞նչ ընեմ, Յակոբ աղա. Հայաստանի մէջ Բարենորոգումներ պիտի ըլլան եղեր. թերեւս մենք ալ պաշտօն մը ձեռք անցունենք...

–Ի՞նչ կսերտես:

–«Ուտեմ» բային ֆրանսերէնը կկարդամ...

–Ֆրանսերէնի ե՞րբ սկսար:

–Ժամ մը առաջ:

–Մէկէն ի մէկ այդ բայն ի՞նչպէս եկար հասար: